

Դավիթ Ղազարյան

Հայերեն հնատիպ ժապավենաձև Հմայիլները

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ-Մ.ՄԱՇՏՈՅԻ ԱՆՎ. ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հայ ժողովրդի մշակութային կյանքում 16-րդ դարի սկզբում տեղի է ունենում մի նոր իրադարձություն. սկզբնավորվում է հայկական տպագրությունը, որի 500-ամյա հոբելյանը նոր է բոլորել:

Մեզ ավանդված տպագիր ժառանգությունը կերտել են անհատներ, ովքեր իրենց հաղթարշավի ճանապարհին անցել են տառապանքների միջով, կրել բազում զրկանքներ: Եթե 16-րդ դարից մեզ հայտնի է շուրջ երեք տասնյակ հայատառ տպագրություն, ապա 17-րդ դարից՝ շուրջ 200 անուն գիրք, իսկ 18-րդ դարում դրանց թիվը գերազանցում է 900-ը: Ընդհանրացնելով կարելի է ասել, որ 1512-1800 թվականների ընթացքում, որը համարվում է հայ տպագիր գրքի հնագույն շրջանը, լույս է տեսել շուրջ 1200 հայերեն տպագիր միավոր¹: Նշենք նաև, որ մինչ օրս էլ շարունակվում են հայերեն նոր հնատիպ միավորների ի հայտ գալը, ինչի պատճառով էլ բերված թվերը մոտավոր են:

Հայ հնատիպ գրքի պատմության մեջ ևս, ինչպես ձեռագիր մատյանների դեպքում, իրենց ձևով և բովանդակությամբ առանձնանում են Հմայիլները, որոնց հիմքում ընկած են գրչագիր օրինակները: Հմայիլն աղոթքների, աղերսների, մաղթանքների ժողովածու է, որը ունի պահպանիչ-բուժիչ նշանակություն. այն աղոթքներով պատրաստուած մի առարկա է, որը կրողին պահպանում է այլևայլ փորձանքներից²: Նախնական ձևի՝ գալարի կամ փաթեթի, ազդեցությունն ակնհայտ է նաև տպագիր օրինակներում. հայ տպագրության պատմության վաղ շրջանում չունենք և ոչ մի գրքաձև Հմայիլ: Ձեռագիր և հնատիպ Հմայիլներն առհասարակ բոլոր առումներով փոխկապակցված են. եթե հնատիպ Հմայիլների համար հիմք են ծառայել ձեռագիր օրինակները, ապա 17-րդ դարի երկրորդ կեսից ի վեր տարածում գտած տպագիր Հմայիլները օրինակ են դարձել մի շարք ձեռագիր Հմայիլների համար: Այս փոխազդեցությունը բնորոշ է ձեռագիր մատյանների և տպագիր գրքերի բոլոր տեսակներին, քանի որ տպագրությունը թեև ապահովում էր «քանակ» (տպաքանակ), սակայն հայկական տպարանների կարճատև գործունեությունը, այն էլ հիմնականում հայրենիքի սահմաններից հեռու, գրքերի պահանջարկը, ցանկությունը ունենալ սեփական օրինակը՝ ստիպում էին տպագրերից արտագրել՝ ստեղծելով ձեռագիր օրինակներ, որոնց մեջ երբեմն նշվում էր տպագրից արտագրված լինելու փաստը:

Հայերեն հնատիպ հմայիլներում տեղ են գտել հիմնականում միևնույն աղոթքները, որոնք ունեն գրեթե միևնույն դասավորվածությունը. որպես կանոն՝ Հմայիլներն սկսվում են Ներսես Շնորհալու «Հավատով խոստովանիմ»-ի մի հատվածով և ունեն Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» աշխատությունից հատվածներ՝ մասնավորապես Բան ԺԲ.-ից և Բան ԽԱ.-ից: Մի քանի Հմայիլներում չորս Ավետարաններից քաղված

¹ Ոսկանյան Ն., Կորկոտյան Բ., Սավայան Ա., Հայ գիրքը 1512-1800 թվականներին, Հայ հնատիպ գրքի մատենագիտություն, Երևան, 1988, էջ VII:

² Мещерская Е. Н., Сирийские заклинательные сборники из Матенадарана // Полестинский сборник, Вып. 27, Ленинград, 1981, стр. 96.

հատվածները՝ Քրիստոսի բժշկության տեսարանները, սկզբի մասում են, իսկ մյուսներում աստվածաշնչյան հատվածները վերջերում են: Աղոթքների ընդհանուր քանակը մեկ Հմայիլում հասնում է մոտ երեք տասնյակի:

Հնատիպ Հմայիլների նկարագրողումները ևս հիմնականում պայմանավորված են բովանդակությամբ, քանի որ ձեռագիր նախօրինակների նմանողությամբ նախորդում են տեքստերին, որոնք կապված են տպագրանկարում առկա կերպարի կամ հորինվածքի հետ (օրինակ՝ Ներսես Շնորհալին պատկերվում է իր գրչին պատկանած ստեղծագործություններից առաջ, Սուրբ Սարգիսը կամ Սուրբ Գևորգը՝ իրենց ուղղված աղոթքներից առաջ, Եզեկիել մարգարեն՝ վերջինիս մարգարեությունից կատարված մեջբերումից առաջ և այլն): Սրբերի պատկերների համար հաճախ օգտագործված է միննույն տպագրատախտակը, և սրբերը տարբերվում են միայն ստորև եղած կա՛մ բացատրագրերի, կա՛մ նկարից հետո սկսվող աղոթքի վերնագրից: Հնատիպ Հմայիլները զարդարում են նաև սուրբգրային թեմաներով ստեղծված պատկերներ՝ «Սուրբ Երրորդություն», «Ավետում», «Ծնունդ», «Մոգերի երկրպագություն», «Ընծայումն տաճարին», «Մկրտություն», «Խաչելություն», «Թաղումն», «ԺԲ. Առաքյալք» և այլն: Մեկ Հմայիլում զուտ թեմատիկ նկարների քանակը կարող է գերազանցել երեք տասնյակը:

Հմայիլների մեծ մասը զարդարում է առաջին հայ փորագրանկարիչ Գրիգոր Մարզվանեցու ստեղծագործությունները: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ վերջինս նախապես համագործակցել է Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու հետ, ում տպարանից լույս են տեսել ավելի քան մեկ տասնյակ Հմայիլներ, ապա 1698 թվականին բաժանվել է նրանից և նրան թողել իր պատրաստած և ստորագրությունը կրող փորագրապատկերները³: Իսկ Էտկար Գնդեվանեցին էլ, ով ևս հրատարակել է Հմայիլ, ըստ ամենայնի, այդ փորագրանկարների կլիշեները կամ փորագրատախտակները վարձակալել է Աստվածատուր Կոստանդնուպոլսեցուց, քանի որ դրանք հետագայում ևս առկա են Աստվածատուրի ավելի ուշ տպագրություններում: Տպագրանկարների տախտակների կամ տպագրական տառերի և զարդերի վարձակալությունը այդ ժամանակ բավական տարածված է եղել:

Գրիգոր Մարզվանեցու ձևավորումների հիմքում ընկած է հայ տպագրության պատմության մեջ իր ուրույն տեղ ունեցող Սուրբ Էջմիածնի և Սուրբ Սարգսի անունը կրող կամ Ոսկանյան տպարանը, որը ոչ միայն նոր որակ և շունչ հաղորդեց հայկական տպագրությանը, այլև առաջինն էր, որ անընդմեջ գործեց քառորդ դար՝ 1660-1686 թվականներին⁴: Գրիգոր Մարզվանեցին նախ յուրացրել է Ոսկանյան տպարանի հարդարանքի ավանդույթները՝ ընդօրինակելով գրեթե ամեն մի տարր՝ պատկերի կառուցվածքը, գործող անձանց քանակը, նրանց տեղաբաշխվածությունը տեսարանի տարածական հորինվածքում, կերպարների շարժումները և մարմինների դիրքերը, ճարտարապետական շինությունները և բնանկարային մանրամասները: Մարզվանեցին իր ստորագրություններն անգամ հաճախ դնում է պատկերի այն նույն տեղում, ուր Քրիստոֆել Վան Զիխեմինն է: Այս շրջանի փորագրանկարներում, որոնք հիմնականում անցել են Աստվածատուր Կոստանդնուպոլսեցուն, բացակայում է թեմայի ինքնուրույն

³ Տիգրանյան Հ., Գրիգոր Մարզվանեցու հրատարակությունները և նրանց արվեստը, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական չորրորդ նստաշրջան. նվիրվում է Կոմիտասի ծննդյան 140-ամյա հոբելյանին, Նստաշրջանի նյութեր 22 դեկտեմբերի, 2009, Երևան, 2010, էջ 136-137:

⁴ Իշխանյան Ռ., Ոսկանյան տպարանը և նրա հրատարակած Աստվածաշունչը, «Էջմիածին», 1966/ԺԱ-ԺԲ, էջ 146-158:

մեկնաբանությունը, ցանկացած մանրամասն ընդօրինակված է միայն մի տարբերությամբ, որ Մարզվանեցու պատկերները եվրոպական փորագրանկարների համեմատ ավելի ընդհանրական են, պակասում են որոշ մանրամասներ:

Արվեստի տեսանկյունից առավել արժեքավոր են Գրիգոր Մարզվանեցու հետագա շրջանի աշխատանքները, որոնցում արդեն կարելի է նկատել նկարիչ-փորագրիչի վարպետությունը և ստեղծագործական մեծ երևակայությունը: Պետք է նշենք նաև, որ այս շրջանի իր ստեղծագործությունները Մարզվանեցին անստորագիր է թողել: Արվեստագետն սկսում է հանդես գալ ավետարանական թեմաների ինքնուրույն մեկնաբանությամբ՝ նորովի, ավելի մանրակրկիտ տարբերով կառուցելով, հայ մանրանկարչության շնչով հագեցնելով և ավելի ակնահաճո դարձնելով իր ստեղծագործությունները⁵:

Հնատիպ Հմայիլների ամենամեծ հավաքածուն գտնվում է Մաշտոցյան Մատենադարանում՝ 122 միավոր: Հայաստանի Ազգային գրադարանում պահվում է 13 միավոր, Հայաստանի պատմության թանգարանում՝ Ազգագրության բաժնում՝ 9 միավոր, Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքում՝ 7, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ 5: Հնատիպ հմայիլներ կան նաև Եղիշե Չարենցի անվան Գրականության ազգային թանգարանում, Վենետիկի միսիոնարյան միաբանությունում, մի շարք անհատների մոտ և այլուր:

Շուրջ հինգ տարվա ուսումնասիրության արդյունքում պարզել ենք, որ 1659-1731 թթ. ընթացքում հինգ տպարաններից լույս են տեսել տասնինը Հմայիլ⁶ (մեկական՝ Գուլբասարի և Էտկար Գնդեվանեցու, չորսը՝ Գրիգոր Մարզվանեցու, տասներկուսը՝ Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու և մեկը՝ դեռևս անհայտ). այս տասնինից վեցը հայտնի է դարձել Մատենադարանի հնատիպ հմայիլների ուսումնասիրության արդյունքում, իսկ մեկը՝ մոտ երեք տարի առաջ մի մասնավոր հավաքածուի⁷:

1659-1731 թվականներին լույս տեսած նորահայտ յոթ հմայիլներից միայն երկուսն են բացահայտում տպարանատերերին՝ Գուլբասարին և Գրիգոր Մարզվանեցուն, իսկ մնացյալի, բացառությամբ մեկի, պատկանելության հարցը պարզել ենք Գրիգոր Մարզվանեցու գործունեությանը և վաստակին անդրադարձած արվեստաբան Հասմիկ Տիգրանյանի հետ համատեղ քննարկումների արդյունքում՝ հիմնականում շեշտը դնելով նկարագրողությունների վրա: Մնացյալ հինգից երկուսը ևս պատկանում են Գրիգոր Մարզվանեցուն, իսկ երեքը՝ Աստվածատուր Կոստանդնուպոլսեցուն:

Այս նորահայտ Հմայիլների շարքում ուշադրության է արժանի հայերեն հնատիպ Հմայիլների առաջնեկը՝ տպագրված 1659 թվականին, ում Գուլբասարի տպարանում: Մինչ մեր ուսումնասիրությունը հայերեն հնագույն տպագիր հմայիլ էր համարվում 1709 թվականին Էտկար Գնդեվանեցու տպագրած օրինակը: Ուսումնասիրության արդյունքում մենք նախ գտանք 1698 թվականին տպված Հմայիլը, որը համարում ենք Գր. Մարզվանեցունը, քանի որ այն զարդարող տասներեք փորագրանկարներից երկուսը պատկանում են իրեն և չեն կրում իր ստորագրությունը, ինչպես արդեն նշել ենք, Գր.

⁵ Տիգրանյան Հ., Գրիգոր Մարզվանեցու հրատարակությունները և նրանց արվեստը... էջ 141-142:

⁶ Ն. Ոսկանյանի, Ք. Կորկոտյանի, Ա. Սավալյանի կազմած՝ «Հայ գիրքը 1512-1800 թվականներին» մատենագիտության մեջ 19 Հմայիլից արտահայտված են 11-ը (1709-1731 թթ. ժամանակահատվածում տպագրված), այս մատենագիտությունը չի ներառում նաև Գրիգոր Մարզվանեցու տպարանից 1713 թվականին լույս տեսած Հմայիլը, որի մասին տես Մինասեան Մ., Հայերեն նորահայտ հնատիպ գիրքեր եւ մատենագիտական լրացումներ, Հասկ հայագիտական տարեգիրք, Նոր շրջան Է. - Ը. տարի 1995-1996, Անթիլիաս - Լիբանան, 1997, էջ 557-558:

⁷ Ղազարեան Դ., Նարեկ Մկրտչեանի մասնավոր ձեռագրական հավաքածուն... էջ 118-137: Ղազարեան Դ., Ժապավինածն Հմայիլների տպագիր առաջնեկը. մի նոր էջ հայ տպագրության պատմության // «Էջմիածին», 2013/Ը, էջ 142-147:

Մարզվանեցին իր գործունեության երկրորդ փուլում իր կերտած փորագրանկարները անստորագիր է թողել: Այն ունի յուրահատուկ ձևավորում, որը չենք հանդիպում հետագա օրինակներում, ինչը, հավանաբար, կապված է տպագրական դժվարությունների հետ: Հմայիլի ամբողջ երկայնքով՝ զարդեզրերի և գրադաշտը եզերող գծերի միջև (6 միլիմետր լայնությամբ), հիմնականում գլխագրերով զետեղված է երկու հատված Գրիգոր Նարեկացու Մատյան Ողբերգությունից: Շարադրանքն ընդմիջարկվում է փորագրանկարներով: Ձախից հատված է Բան ԺԲ.-ից, իսկ աջից՝ Բան ԽԱ.-ից:

Նարեկ Մկրտչյանի մասնավոր հավաքածուում հանգրվանած հայերեն տպագիր Հմայիլների առաջնեկը, ցավոք, ամբողջական չէ. սկզբից պակասավոր է: Պակասող հատվածների մասին անհնար է ճշգրիտ դատողություններ անել. տպագրի ամբողջական տեսքի մասին հնարավոր կլինի խոսել մեկ այլ օրինակի երևան գալուց միայն:

Հմայիլն առանձնանում է նաև տպագրական տեխնիկայով՝ լինելով վիմատիպ (լիտոգրաֆիա) տպագրության եզակի հայկական նմուշ. և մեզ է ներկայացնում նաև մինչ այժմ անհայտ մի տպարանի գոյություն, որը ինչպես նշված է Հմայիլի յիշատակարանում պատկանում է Ռհանեսի որդի Գուլբասարին: Տպարանի տեղը հայտնի չէ. Հմայիլը ներկայիս տիրոջ նախնիները բերել են Կիլիկիայից: Չի բացառվում նաև, որ այս Հմայիլը Գուլբասարի տպարանից լույս տեսած առաջին և միակ տպագրությունն է, որի ոչ բարձր վարպետության մասին են խոսում Հմայիլի շարադրանքում առկա ինչպես տառասխալները, այնպես էլ մի շարք տառերի ոչ ճիշտ փորագրված լինելը, որոնց արդյունքում տպագիր օրինակում հայելային ձևով շրջված են: Գրչի հիշատակարանը գրված է յուրատիպ «բոլորշի-կնքադրոշմը» եզերող ժապավենի մեջ («Ի տը[ւ]արանիս Ռհանեսի որդի Գուլբասար[ին] թվիս ՌՃԸ. (=1659)»):

Ուսումնասիրության արդյունքում պարզել ենք նաև, որ Հմայիլների մի մասն ունեցել է մի քանի թողարկում (տպաքանակ), ինչի մասին վկայում են նույն հրատարակության տարբեր օրինակների մեջ առկա թե՛ ուղղումները, թե՛ ձևավորման որոշ տարբերություններ (այսուհանդերձ, բոլորն ունեն միևնույն հիշատակարանները):

Քննության առնենք այսպիսի տարբերություններ ունեցող՝ 1709 թվականին Էտկար Գնդեվանեցու տպարանից լույս տեսած Հմայիլը, որից Մաշտոցյան մատենադարանի հնատիպ գրքերի բաժնում պահվող 122՝ հիմնականում ոչ ամբողջական Հմայիլների շարքում կա քսաներկու օրինակ.

1. Դրանցից միայն մեկը՝ Հ^մ 63, ունի ճակատագարով՝ «Ողջոյն քեզ Մարիամ լի շնօրհօք...» հատվածից առաջ:

2. Հ^մ 63, 106 և 116-ում «Աղօթք զաւակ ծնեւոյ» վերնագրի ծնելոյ բառի «լ» տառի տեղը բացարկ է, որը կա Հ^մ 1, 2, 3, 4, 26, 44, 56, 97, 98, 99, 102 Հմայիլներում:

3. Հ^մ 1, 2, 4, 5, 61 և 102 Հմայիլներում «Աղօթք թպղայի և ալի որ հալածուին ավ», այսինքն՝ Աստուծով է, իսկ Հ^մ 3, 26, 39, 44, 51, 56, 63, 97, 98, 98, 106 և 116-ում վերջին բառն ունի սխալ հապավում՝ «այվ»:

4. Հ^մ 1, 3, 5, 97, 99 և 106 օրինակների հիշատակարանում «արքայանիստը» գրված է «արգայանիստ» ձևով:

1716 թվականի հունվարին Գր. Մարզվանեցու հրատարակած Հմայիլում ևս առկա են 12 տարբերություններ.

1. Մաթեմատիկական նկարից առաջ՝ Հ^մ 50, 81-ում «աներևոյթ կործանեցին / և լեր պահապան», իսկ Հ^մ 66, 69, 100, 52, 120-ում՝ «աներևոյթ կործանեցին»:

2. Մաթեմատիկական նկարից հետո՝ Հ^մ 19-ում, 50, 69, 81-ում Ճակատագարդ (Հ^մ 19-ը այլ է), որին հաջորդում է, բաժանագարդ, ապա՝ վարդեակ, «Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մաթեմատի», և Սկսվածքի առաջին տողը երկաթագիր գլխատառերով է, իսկ Հ^մ 52, 66, 100, 120-ում՝ երկու այլ բաժանագարդ են, ապա՝ խորագիրն է առանց վարդեակի, և սկսուածքի միայն առաջին տառն է թոչնագիր, իսկ մնացած տառերը փոքրատառեր են, որի պատճառով էլ հետագա տողերը խառնվում են:

3. Հ^մ 19, 50, 69, 81-ում՝ վարդակը առկա է նաև «Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի» խորագրից առաջ, իսկ Հ^մ 52, 66, 100, 120-ում՝ վարդակը բացակայում է խորագրից առաջ:

4. Հ^մ 19, 50, 69, 81-ում՝ վարդակը առկա է նաև «Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասոս» խորագրից առաջ, իսկ Հ^մ 52, 66, 100, 120-ում՝ վարդակը կրկին բացակայում է:

5. Հ^մ 19, 50, 69, 81-ում՝ վարդակը առկա է նաև «Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յոհաննոս» խորագրից առաջ, իսկ Հ^մ 52, 66, 100, 120-ում՝ վարդակը կրկին բացակայում է:

6. Հ^մ 19, 49, 69, 74, 81, 108-ում օրինակներում ԺԲ. առաքեալների կտորը ամփոփում է Ճակատագարդ, իսկ Հ^մ 41, 66, 75, 77, 100, 120-ում՝ ծաղիկ:

7. Հ^մ 19, 49, 69, 74, 81-ում՝ «Աղօթք զօրաւոր սրբոյն Գրիգորի նարեկա: / Որդի այ կենդանոյ օրհ/նելոյ յամի», իսկ Հ^մ 41, 66, 41, 77, 100, 120-ում՝ «Աղօթք զօրաւոր սրբն Գրիգորի նարեկա / ՈՐԴԻ Այ կենդանոյ օրհ/նեալոյ յամի»:

8. Հ^մ 19, 49, 69, 74, 81, 108-ում՝ նյութի խորագիրը բացակայում է, որն առկա է Հ^մ 41, 66, 77, 100-ում՝ «Աղօթք մեսրոպայ վարդապետի ասացեալ»:

9. Հովհաննէս Մկրտչի գլխատում նկարից առաջ Հ^մ 19, 49 (՝), 69, 74, 81, 108-ում՝ «զաւակ բարի ծառայիս այ»-ում Աստված բառի հապավումը գրված է փոքրատառով, իսկ Հ^մ 41, 66, 77-ում, 100-ում՝ մեծատառով. «զաւակ բարի ծառայիս Այ»:

10. Ստեփաննոս Նախավկայի նկարից առաջ Հ^մ 19, 49, 69, 74, 108-ում՝ նկատելի է նույն տարբերությունը՝ «ծառայիս այ», որն արդեն մեծատառով է Հ^մ 41, 66, 100-ում. «ծառայիս Այ»:

11. Հ^մ 19, 49, 69, 74, 81, 108-ում կրկին կարելի է տեսնել վարդակ «Աղերս առ սր Ստեփաննոս Նախավկայն» խորագրից առաջ, որը բացակայում է Հ^մ 41, 66, 77, 100-ում:

12. Հրեշտակները սպանում են սատանային նկարից հետո Հ^մ 19, 49, 74, 76, 81, 108-ում՝ խորագիրը բացակայում է, որն առկա է Հ^մ 41, 66, 75, 77, 100-ում՝ «Աղօթք զօրաւոր առ երկնային զօրսն»:

1718 թվականի Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու տպարանից լույս տեսած Հմայիլում ևս արձանագրել են տարբերություններ.

1. Հ^մ 8, 20, 33-ում՝ «Աղօթք թպղայի և ալի»-ից առաջ գտնվող բաժանագարդը բաղկացած է 1 զարդից, Հ^մ 9, 12, 22-ում՝ 2 զարդից, իսկ 11, 34, 90-ում՝ 3 զարդից:

2. Հ^մ 8, 11, 20, 33, 34, 90-ում՝ «Աղօթք թպղայի և ալի»-ից հետո գտնվող բաժանագարդը բաղկացած է 2 զարդից, Հ^մ 9, 12, 22-ում՝ 1 զարդից:

Մի շարք ծարաղրանքներում արձանագրել ենք տառերի, կետադրության նշանների, որից ելնելով արդեն իսկ ամբողջական տողերի տարբերություններ.

3. Հ^տ 8, 20, 33-ում «Աղօթք վս վաճառի և ամ ուղիղ բա/նի աջողելոյ ի այ և յորժամ դատա/ւրց և պարոնի դիմաց կանկնի խօսքն/ կտրուկ եղիցի ծառայիս այ», իսկ Հ^տ 9, 12, 22-ում «Աղօթք վս վաճառի և ամ ուղիղ բա/նի աճողելոյ ի յայ և յորժամ դատա/ւորց և պարոնի դիմաց կանկնի խօսք/ կտրուկ եղիցի ծառայիս այ», իսկ Հ^տ 11, 34, 90-ում «Աղօթք վս վաճառի և ամ ուղիղ բա/նի աճողելոյ ի այ, և յորժամ դատա/ւորց և պարոնի դիմաց կանկնի խօսքն/ կտրուկ եղիցի ծառայիս այ»:

4. Հ^տ 8, 20, 33-ում «...երկինք և ելին հրեշտակք և / ունէին բանալիք... քան զլուսին ի / լրումն փառօք և պատուօք ի դէմ...», իսկ Հ^տ 9, 11, 12, 22, 34, 90-ում՝ «...երկինք և ելին հրեշտակք և ու/նէին բանալիք... քան զլուսին /ի լրումն փառօք...»:

5. Նույնը նկատելի է նաև Հմայիլն ամփոփող հիշատակարանում, այսպես եթէ Հ^տ 8, 20, 33-ում.

«յ Այս հէմայիլս որ գրված է
յՀայրք և եղբայրք որ սայ առ ցէ
յԽաղաղութամբ վայելես ցէ
յՈչ չար իւրըն պատահես ցէ
յԽորհուրդն բարին կատարես ցէ
յԻ խորին ծերութին հաս ցէ
Հայր մերիւ զաշխտողս սորին յիշեսցէ
յԵւ յետ աստեացս որ նա ել ցէ
յԱրքայութիւնն ժառանգես ցէ»:

Ապա Հ^տ 9, 10, 11, 12, 22, 34-ում.

«յ Այս հէմայիլս որ գրվա ծէ
յՀայրք և եղբայրք որ սայ առ ցէ
յԽաղաղութամբ վայելես ցէ
յՈչ չար իւրըն պատահես ցէ
յԽորհուրդ բարին կատարես ցէ
յԻ խորին ծերութի հաս ցէ
յՀայր մեղայիւ զմեզ յիշես ցէ
յԵւ յետ աստեացս որ նա ել ցէ
յԱրքայութիւնն ժառանգես ցէ»:

6. Հ^տ 8, 20, 33-ում՝ «յԳրեցաւ յՀմայիլըս յի թվին...», Հ^տ 9, 10, 11, 12, 22, 34-ում «թվին» բառը գրված է մեծատառով. «յԳրեցաւ յՀմայիլըս յի Թվին...»:

Եթէ վերը նշված տարբերությունների մի մասը ընդունենք, որ կարելի է համարել սրբագրման արդյունք, ապա տարբերությունների մյուս մասը խոսում է, որ գործ ունենք ոչ թէ 19 այլ 20ից ավել տպագրությունների հետ, որով ավելի է հարստանում հայ տպագրության պատմությունը: Հուսով ենք, որ մեր կողմից տարվող հետագա ուսումնասիրությունները, ինչպես նաև նոր օրինակների հայտնաբերումը, ավելի ամուր հիմքերի վրա կդնեն այս հարցի պարզաբանումը, քանի որ պահպանված Հմայիլների զգալի մասը մեր օրեր է հասել նկատելի վնասումներով, և ոչ բոլոր հրատարակություններից ունենք ամբողջական օրինակներ:

Ստորև ժամանակագրական կարգով ներկայացնում ենք մեզ հայտնի հնատիպ Հմայիլները՝ նշելով նրանց լույսընծայման տարին, տպարանը և տպագրավայրը՝ առանց հաշվի առնելու միևնույն Հմայիլում առկա տարբերությունները: Հերթական համարի վրա աստղանիշ ունեցող յոթ Հմայիլները մեր ուսումնասիրության արդյունքում հայտնի դարձած օրինակներն են: Դրանցից երեքն ամբողջական չեն, որի պատճառով էլ նրանց տպագրության թվականներն առայժմ մնում են անորոշ, թեև համեմատությունները մյուս օրինակների հետ բերում են այն եզրակացության, որ դրանք պետք է լինեն 18-րդ դարի առաջին քառասունամյակի տպագրություններ, ուստի և եզրափակում են ստորև բերվող մեր աղյուսակը:

Հմր	Ժամանակ	Վայր	Տպարան
1.*	1659 թ.	-	Գուլբասարի
2.*	1698 թ.	[Կ. Պոլիս]	[Գրիգոր Մարգվանեցու]
3.	1709 թ. հունվարի 1	Կ. Պոլիս	Էտկար Գնդեվանեցու
4.*	1713 թ. փետրվար	[Կ. Պոլիս]	Գրիգոր Մարգվանեցու
5.	1716 թ. հունվար	[Կ. Պոլիս]	[Գրիգոր Մարգվանեցու]
6.*	1716 թ. ապրիլի 20	[Կ. Պոլիս]	[Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու]
7.	1717 թ. նոյեմբերի 1	[Կ. Պոլիս]	[Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու]
8*	1717 թ. նոյեմբերի 1	-	-
9.	1718 թ. օգոստոսի 10	[Կ. Պոլիս]	[Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու]
10.	1724 թ. հոկտեմբերի 5	[Կ. Պոլիս]	[Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու]
11.	1725 թ. հուլիսի 15	[Կ. Պոլիս]	[Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու]
12.	1726 թ. մայիսի 20	[Կ. Պոլիս]	[Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու]
13.	1727 թ. մայիսի 20	[Կ. Պոլիս]	[Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու]
14.	1728 թ. ապրիլի 20	[Կ. Պոլիս]	[Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու]
15.	1729 թ. ապրիլի 10	[Կ. Պոլիս]	[Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու]
16.	1731 թ.	[Կ. Պոլիս]	[Գրիգոր Մարգվանեցու]
17.*	-	[Կ. Պոլիս]	[Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու]
18*.	-	[Կ. Պոլիս]	[Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու]
19.*	-	[Կ. Պոլիս]	[Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու]